ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2017
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ, 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
Տևողությունը 2,5 ժամ

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (15 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (9 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1–6–րդ առաջադրանքներ: (0,5 X 6 = 3 միավոր)

1. Ո՞վ էր հիմնադրել Նոր Ջուղայի դպրոցը:

1) Խաչատուր Կեսարացի
2) Կոստանդ Ջուղայեցի
3) Հակոբ Ջուղայեցի
4) Աղեքսանդր Ջուղայեցի

2. Ո՞վ նշանակվեց ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար 1992 թ. փետրվարին.

1) Արկադի Տեր–Թադևոսյանը
2) Արթուր Մկրտչյանը
3) Սիմոն Աչիքգյոզյանը
4) Գուրգեն Դալիբալթայանը

3. Ե՞րբ է մահացել հայոց արքա Տիգրան Երվանդյանը:

1) Ք.ա. 525 թ.
2) Ք.ա. 529 թ.
3) Ք.ա. 520 թ.
4) Ք.ա. 522 թ.

4. Ո՞վ է մտահղացել Խանասորի արշավանքը.

1) Անդրանիկը
2) Նիկոլ Դումանը
3) Արաբոն
4) Գևորգ Չավուշը

5. Այնթապի 1920 թ. ինքնապաշտպանության կազմակերպիչներից էր՝

1) Ներսես Թավուզճյանը
2) Միհրան Տամատյանը
3) Պետրոս Սարաճյանը
4) Սարգիս Ճեպեճյանը

6. Արցախահայության առաջին համագումարը տեղի է ունեցել՝

1) 1918 թ. հուլիսի 22–26–ին
2) 1919 թ. հուլիսի 22–26–ին
3) 1918 թ. սեպտեմբերի 10–14–ին
4) 1919 թ. սեպտեմբերի 10–14–ին

բ. Լրացնել պատասխանը: (1 X 3 = 3 միավոր)

1. Գահակալման տարիները համապատասխանեցնել Արշակունի արքայի անվանը.

1. Արշակ III	ա. 338 – 350 թթ.
2. Պապ	բ. 388 – 414 թթ.
3. Տիրան	գ. 350 – 368 թթ.
4. Վարազդատ	դ. 330 – 338 թթ.
5. Արշակ II	ե. 378 – 387 թթ.
6. Վռամշապուհ	զ. 370 – 374 թթ.
	է. 374 – 378 թթ.

1	2	3	4	5	6

2. 1914 – 1915 թթ. ձևավորված հայ կամավորական ջոկատի հրամանատարի անունը համապատասխանեցնել ջոկատին.

1. I ջոկատ	ա) Հ. Արղության
2. II ջոկատ	բ) Ն. Աղբալյան
3. III ջոկատ	գ) Նիկոլ Դուման
4. IV ջոկատ	դ) Վարդան
5. V ջոկատ	ե) Համազասպ
6. VI ջոկատ	զ) Քեռի
7. VII ջոկատ	է) Անդրանիկ
8. VIII ջոկատ	ը) Դրո
	թ) Ա. Ջանփոլադյան

1	2	3	4	5	6	7	8

3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Վենետիկի Մուրադ–Ռափայելյան վարժարանի ստեղծումը
բ) Իգական դպրոցի բացումը Շուշիում
գ) «Վարժապետանոցի» հիմնումը Վանում
դ) Կարինի Սանասարյան վարժարանի հիմնումը
ե) Իգական դպրոցի բացումը Երևանում
զ) Ժառանգավորաց վարժարանի բացումը Վարագավանքում
է) Արմաշի դպրեվանքի բացումը
ը) Հոգևոր ճեմարանի հիմնումն Էջմիածնում

1	2	3	4	5	6	7	8

գ. Լրացնել պատասխանը: (1,5 X 2 = 3 միավոր)

1. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ. ***(0,5 X 3 = 1,5 միավոր)***

ա) Հայաստանի խորհրդային իշխանությունը, խախտելով դեկտեմբերի 2–ի իշխանափոխության համաձայնագիրը, ձևավորեց միակուսակցական վարչակազմ:

բ) Հայաստանում խորհրդային վարչակարգը հաստատելու և ամրապնդելու գործընթացը կազմակերպում և ուղղորդում էր Հայաստանի խորհուրդների համագումարը:

գ) Հայաստանի խորհրդային իշխանությունը առաջին իսկ օրերից սկսեց կիրառել նոր տնտեսական քաղաքականություն:

դ) Խորհրդային իշխանությունը Հայաստանում քաղաքական հետապնդումներ և բռնություններ գործադրեց նախորդ կառավարության, ազգային կուսակցությունների ճանաչված անդամների, այլախոհների և հայկական բանակի սպայակազմի նկատմամբ:

ե) Հայաստանում խորհրդային կարգեր «ներդնելու» նպատակով ներքին գործերի և արտաքին գործերի ժողկոմատները սկսեցին բռնություններ գործադրել բնակչության նկատմամբ:

զ) Գարեգին Նժդեհի գլխավորած Զանգեզուրի ինքնապաշտպանության շնորհիվ այդ երկրամասը մնաց Հայաստանի կազմում:

է) ՀՍԽՀ առաջին Սահմանադրության համաձայն՝ ամբողջ իշխանությունը հանրապետությունում պատկանում էր ՀամԿ(բ)Կ (ԽՄԿԿ) կենտրոնական կոմիտեին:

ը) Լենինի նախագծի համաձայն՝ խորհրդային հանրապետությունները պետք է մտնեին ՌՍԴԽՀ–ի կազմը:

2. Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ. *(0,5 X 3 = 1,5 միավոր)*

ա) 1988–1990 թթ. Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպված կոտորածների ու բռնի տեղահանությունների հետևանքով շուրջ 400 հազար հայեր հեռացան այդ հանրապետությունից:

բ) 1920–ական թվականներին խոշոր գաղթօջախ ձևավորվեց նաև Ամերիկայում (ԱՄՆ և Կանադա)՝ շուրջ 130 հազար հայերով:

գ) 1945 թ. մայիսի 28–ին ՀՀ նախկին վարչապետ Հ. Քաջազնունին դիմեց Ստալինին, Ռուզվելտին և Չերչիլին՝ խնդրելով ջանքեր գործադրել Հայկական հարցի արդարացի լուծման ուղղությամբ:

դ) Հայկական համաշխարհային կոնգրեսին մասնակցում էին 12 երկրների 715 պատգամավորներ, որոնք ներկայացնում էին 50 սփյուռքահայ կազմակերպություններ, 51 եկեղեցական թեմեր:

ե) 1920–ական թվականների սկզբին Խորհրդային Միության սահմաններից դուրս հաշվվում էր շուրջ մեկ միլիոն հայ բնակչություն:

զ) Միայն 1947–1951 թթ. ԱՄՆ տեղափոխվեցին շուրջ 10 հազար հայեր, հիմնականում հայ ռազմագերիներ՝ ԽՍՀՄ նախկին քաղաքացիներ, որոնց վերադարձը հայրենիք կավարտվեր ստալինյան ճամբարներում արգելափակումով:

է) 1923 թ. Խորհրդային Հայաստան ներգաղթածների ընդհանուր թիվը կազմեց 5016 մարդ՝ մեծ մասամբ վանեցիներ:

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» **(6 միավոր)**

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – րդ առաջադրանքներ: ***(0,5 X 4 = 2 միավոր)***

1. Ե՞րբ է տեղի ունեցել Քերոնեայի ճակատամարտը:

1) Ք.ա. 490 թ. 2) Ք.ա. 334 թ. 3) Ք.ա. 338 թ. 4) Ք.ա. 449 թ.

2. Պարսկաստանում Սեֆյանների պետության գոյության ժամանակաշրջանն է.

1) 1299 – 1918 թթ.
2) 1502 – 1736 թթ.
3) 1736 – 1911 թթ.
4) 1502 – 1918 թթ.

3. Ո՞ր երկրում է, աշխարհում՝ առաջինը, եկեղեցին անջատվել պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց.

1) Անգլիա
2) Ռուսաստան
3) Գերմանիա
4) Ֆրանսիա

4. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.

«Շտետտինից՝ Բալթիկայում, մինչև Տրիեստը՝ Ադրիատիկում, երկաթյա վարագույր է իջել մայրցամաքի վրա: Այդ գծից այն կողմ պահվում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հնագույն պետությունների բոլոր գանձերը»:

Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.

1) Հ. Թրուման
2) Ա. Հիտլեր
3) Ու. Չերչիլ
4) Շ. դը Գոլ

բ. Լրացնել պատասխանը: (1 X 2 = 2 միավոր)

1. Ժամանակաշրջանը համապատասխանեցնել պատմական իրադարձությանը:

1) Աշխարհում առաջին հանրագիտարանի ստեղծումը
2) «Թավշյա հեղափոխությունները» Արևելյան Եվրոպայի երկրներում
3) Ֆաշիստական վարչակարգը Գերմանիայում
4) Իրանա–իրաքյան պատերազմը
5) Համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամը
6) Քաղաքացիական պատերազմը Իսպանիայում

ա) 1980 – 1988 թթ.
բ) 1990 – 1992 թթ.
գ) 1936 – 1939 թթ.
դ) 1929 – 1933 թթ.
ե) 1751 – 1776 թթ.
զ) 1933 – 1945 թթ.
է) 1989 – 1990 թթ.

1	2	3	4	5	6

2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) ԽՍՀՄ–ի փլուզումը
բ) Առաջին անհատական համակարգչի ստեղծումը
գ) ՆԱՏՕ–ի զորքերի ներխուժումը Հարավսլավիա
դ) Եվրոպական միության ստեղծումը
ե) Վերակառուցման քաղաքականության սկիզբը ԽՍՀՄ–ում
զ) Գերմանիայի վերամիավորումը
է) ԼՂՀ–ի հռչակումը

1	2	3	4	5	6	7

գ. Լրացնել պատասխանը: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ. ընտրել չորսը:

ա) Նորագույն շրջանի ամենատարածված փիլիսոփայական ուղղություններից է էքզիստենցիալիզմը, որի հիմնադիրներն էին գերմանացիներ Ա. Շոպենհաուերը, Ֆ. Նիցշեն և ֆրանսիացի Ա. Բերգսոնը:

բ) 1993 թ. ամերիկացի գիտնական Ս. Հանթինգթոնն իր հոդվածում տեսակետ էր հայտնում, որ ապագայում պատերազմները ոչ միայն չեն բացառվում, այլև սպասվում են ավելի խոշոր պատերազմներ՝ բախումներ քաղաքակրթությունների միջև:

գ) ԱՊՀ երկրներում ծավալված «գունավոր հեղափոխությունների» արդյունքում իշխանությունից հեռացվեցին Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի և Ղազախստանի նախագահները:

դ) Ազգերի ինքնորոշում հասկացությունն առաջին անգամ հնչել է 1815 թ. Վիեննայի վեհաժողովում, և գրեթե նույն ժամանակ էլ շրջանառության մեջ է մտել ազգերի ինքնորոշման իրավունք հասկացությունը:

ե) 1999 թ. հունիսին իտալական Բոլոնիա քաղաքում 29 երկրների կողմից ընդունված հռչակագրով հայտարարվեց միասնական կրթական (առաջին հերթին՝ բարձրագույն կրթության) տարածքի ստեղծման մասին:

զ) 1947 թ. ՄԱԿ-ը որոշում ընդունեց Պաղեստինի տարածքում ստեղծել երկու պետություն՝ արաբական և հրեական, դրան հաջորդեց հրեաների Իսրայել պետության ստեղծումը 1948 թ.:

է) 2011 թ. Ռուսաստանի Դաշնությունը, օգտագործելով 2010 թ. ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ որոշ երկրների նախաձեռնությամբ Կոսովոյի անկախության ճանաչման նախադեպը, ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը:

ը) ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում նախկին խորհրդային հանրապետություններում լուրջ հիմնախնդիր դարձավ մտավոր ներուժի հեռացումը հայրենիքից, որը ստացել է «ուղեղների արտահոսք» անվանումը:

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (5 միավոր)

1. Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք քաղաքական նոր իրադրությունն աշխարհում: Ո՞րն է հետսառըպատերազմյան նոր աշխարհակարգի բնութագիրը: Արմատական ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան միջազգային հարաբերություններում: Աշխարհաքաղաքական զարգացումների ապագայի վերաբերյալ ի՞նչ տեսակետներ են շրջանառվում. բացատրե՛ք դրանց էությունը:

(2,5 միավոր)

2. Ներկայացրե՛ք 1945 – 1991 թթ. սփյուռքահայ մշակույթը: Գնահատե՛ք սփյուռքահայ մշակութային գործիչների դերը համաշխարհային մշակույթում:

(2,5 միավոր)

Հանձնաժողովի նախագահ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Է.Մինասյան